

Բանայ խանուժ իպի, էնու ծամիր կապից Քիւռիկ-Ջալալու պուչ, Քիւռիկ-Ջալալին ամէն փրթուչ մէկ էրկիր էթալ ծամիմ մնաց պուչ, իպի մօտ Խանդիւթ խաթիւն, տեսաւ:

Դարձան, բարձին Դաւթի լէշ, բիրին, Սասմոյ տան յէռջիւ տրին: Խանդիւթ խաթիւն էսաց.— Յիտիւ. Դաւթին, իս ախշար չ'մնար:

Էն սհաթին էլաւ ուր փանջարէն,— փանջարէն քեառսուն գեազ բանձըր էր գետնուց, մէկ քեար էլ յէռջիւ էնու փանջարին էր, տա՛ւերկու գիւմէշ կ'կայնացըցին վեար քեարին, կ'լըւէն¹⁾, ընցկուն միծ քեար էր.— որ էլաւ փանջարէն, զինք վեար ուր գլխուն տփից²⁾ վեար քեարուն. գլեռի չուր թիւքիր մտաւ մեանչ քեարին:

Բիրին, քեարէն խանիցին,— քեար մնաց փուս. էնու գլխու տեղ էրկու արասը փիլայ կ'լցին, կ'ծիծին:

Էլան էրկըւը նաշն³⁾ էլ կապիցին յիրարու, քեառսուն տէր-տէրով, քեառսուն վարդապտով, քեառսուն էլ սարկաւագով, քեաղ-քի ժողովուրդն էլ բիրագի խիտ, լալով, գեռալով, ժամով, պատարագեով տարան, թաղիցին:

Դաւթի ումրն⁴⁾ էլ ինչ կան էրի ախշար, եօթ խարիր յիտուն տարի:

Աստուած օղորմի Դաւթին, Խանդիւթ խաթիւնին.

Աստուած օղորմի էնու խէր Մհերին,

Աստուած օղորմի Բաղդասարին,

Աստուած օղորմի Մըլքըսէթ. քհանին,

Աստուած օղորմի մի փիր վարպիտին, ինչ միզի շանք ի տուի:

1) Կըլուանային: 2) Խփեց: 3) Դագաղ: 4) Կեանք, հասակ: